

ԳԱՅԵՖԵՐ

ՑԱԼ ՈՂԲԵՐԱԿԱԿԱՆ

Ի ԲԵՐԱՆՈՅ ՄԵՌԵԼՈՅ Է ԱՍԱՑԵԱԼ

Ո՞վ քանանայք եւ վարդապիտք աստուածաբանք ,
Եւ ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան ,
Զիմ գանգա՞ւ ըրս լսեցք զուք միաբան ,
Եւ զԱստուածն աղաչեցէք ինձ փրկութեան :

Երէկ անմահ զիս զիտէի ՚ւ անապական ,
Այսօր հանին զիս ի տանէու իմ օթեւան .
Թէ «Ա՛ լլ չունիս մասն յաշխարհէս փոփոխական ,
Ե՛կ ի տո՞ւնն յափտենից քու հայրական» :

Երէկ զինչ բերգ էի մարմողս անառական ,
Այսօր հանին զիս ի տանէու իմ օթեւան .
Ի գերեզման զիս կը տանին որ է զնդան .
Այլ ճար չունիմ յետ զառնալոյ յիմ օթեւան :

Երեկ զինչ վարդ (է)ի զարդարած հոտով բուրման ,
Եւ զինչ շուշան պայծառ գոյնով խիստ աննման .
Այսօր ելայ ի աշխարհէս մերկ եւ ունայն .
Միայն զպատանս ունիմ բաժին որ ինձ կուտան :

Ես խարեցայ ի յաշխարհէս պատրողական ,
Եւ յաղթեցայ մեղօք՝ զերիս անզղական .
Գործքս միայն ինձ մընացել հոգւոյ փրկան ,
Պաշար չունիմ երկար ճամբուս իմ զնացական :

Դուք մընացէք խաղաղութեամբ, ես կու գընամ,
Ի յաշխարհէս զիս կը տանին մոլորական .
Խիստ անյօժար զնողիս առին ՚ւ ես փոշիման .
Այսօր հհաս ինձ հրաման որ զիս տարան :

Այլ չեմ տեսեալ զայս ճանապարհ որ կու գնամ ,
Ոչ զայս անեղ օրս որ տեսայ անզերծական .
Զիս կու տանին զառն ու տիսուր ու լալական ,
Այլ ճար չունիմ յետ զառնալոյ կամ փախստեան :

Այս ճանապարհս որ կու գնամ անզարծական ,
Դառն եւ զժուար եւ անծանօթ որդւոց մարդկան ,
Եւ խիստ ողորմ եւ լալագին անօդնական .
Իմ տանօղքն ու անօդն եւ անօդնան

Դըժոխո՞ց հոտքն կուզայ , ես կ'երերամ,
Սատանայ գիս խոցեր է 'ւ ես կու դողամ .
Մեղաւորաց ձայնն կուզայ որ կու կոծան,
Աղաղակեն ի չար տանջանս անօդնական :

Անդնդոց խաւարն ի բաց պատրաստական ,
Լալ աչացն եւ ատամանցն կափկափման ,
Սանդարամնտն անհընարին անդնդական .
Եւ գժոխոց հուր գեհենին անշիջական :

Հանց թագաւոր կու տեսանեմ զարմանական ,
Որ երկնային զօրքն ի ահէն սարսեալ գողան .
Ես անարժան եմ տեսանել զանման արթայն ,
Որ խաչեցաւ իմուս մարմնով՝ որպէս գրեցան :

Մեղքըն խարեաց մարմնով կենցազս հետական
'ի եկի տեսայ զտանջարանըն զանազան .
Աստին չունիմ դործելոյ ճար կամ քաւարան .
Իմ գեղըն դուք էք յաշխարհի աղօթական :

Աղաչեցէք վասն իմ զտէր արարչական ,
Զդասս անմարմնոցն որ ի յերկինս են փառարան .
Զարարչական բանին ծողըն Մարիամ ,
Որ անդաղար բարեխոսէ ազի մարդկան :

Դուք հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն մաքրողական .
Պատարագօք ինձ օգնեցիք մաղթողական .
Եւ հաւատովս վերանամ երկնից խորան .
Զի Տէրն քաղցր եւ պարտական ողորմութեան :

Դրեաւ տակս ողբերական ի բուականորեանս Հայոց
ՌՃՂԹ . ի յամսեն նն սեպտեմբերի ԺԱ . ձեւ
ուամբ գծողի տախիս, ՏՐՈՒԺԱԿԱՅԵՏՆԵԱԿ ամենեցուն
ԱՆՏՈՆ ԴՊՐԻ

(Տաղարան, Ս. Դաղարու վանքի ձեռաւ-
գիրներու հաւաքածոյէն, թիւ. 370):